

**«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային
Կազմակերպություն ՍՊԸ**

**Ֆինանսական հաշվետվություններ
2011թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ (նախկին ՍՊԸ)
Խորհրդին

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական սպացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական սպացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Այլ նշում

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և անսաթվին ավարտված ժամանակաշրջանի համադրելի տվյալներն աուդիտ չեն անցել:

pp *S.P.S.*

Էնդրյու Քոքսշել
Տնօրեն

KPMG Armenia JSC



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
26 ապրիլի 2012թ.

S.P.S.

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՄՊԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ծնթգ.	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Տոկոսային եկամուտ	4	1,478,601
Տոկոսային ծախս	4	(174,992)
Զուտ տոկոսային եկամուտ	1,303,609	77,685
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(1,269)	(2)
Այլ գործառնական եկամուտ	5	180,974
Այլ գործառնական ծախսեր	(6,067)	(3,006)
Գործառնական եկամուտ	1,477,247	358,791
Արժեզրկումից կորուստներ հաճախորդներին տրված վարկերի գծով	11	(35,656)
Աշխատակազմի գծով ծախսեր	6	(438,397)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(149,813)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	853,381	208,863
Շահութահարկի գծով ծախս	8	(171,083)
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար	682,298	167,008

5-ից 49-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2012թ. ապրիլի 26-ին:

Գագիկ Վարդանյան
 Գործադիր տնօրեն



Ալեքսանդր Սահակյան
 Գլխավոր հաշվապահ

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
			Աուդիտ չանցած
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	247,236	458,886
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	10	1,076,778	-
Հաճախորդներին տրված վարկեր	11	4,632,359	2,381,399
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	12	72,556	7,752
Այլ ակտիվներ	13	32,963	2,201
		6,061,892	2,850,238
ԸՆԴԱՄԵՆՆ ԿԵԼԻՎՆԵՐ			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	14	2,405,053	149,831
Ընթացիկ հարկային պարտավորություն		125,386	48,235
Հետաձգված հարկային պարտավորություն	8	366,970	61,125
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	15	262,520	1,609,492
Այլ պարտավորություններ	16	77,675	353,689
		3,237,604	2,222,372
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	17	500,000	180,000
Լրացուցիչ կապիտալ	14	1,474,982	280,858
Չբաշխված շահույթ		849,306	167,008
		2,824,288	627,866
ԸՆԴԱՄԵՆՆ սեփական կապիտալ		2,824,288	627,866
ԸՆԴԱՄԵՆՆ պարտավորություններ և սեփական կապիտալ		6,061,892	2,850,238

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ծնթգ.	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	1,175,060	60,536
Վճարված տոկոսներ	(47,357)	-
Ջուտ վճարումներ արտարժույթով գործառնությունների գծով	(1,254)	(3)
Ստացված զուտ այլ եկամուտ/(ծախս)	174,907	281,108
Աշխատակազմի և այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ	(573,274)	(103,457)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	(1,024,441)	-
Հաճախորդներին տրված վարկեր	(1,990,577)	(2,377,129)
Այլ ակտիվներ	89	(1,151)
Գործառնական պարտավորությունների աճ		
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	687,281	1,609,492
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ նախքան շահութահարկի վճարումը	(1,599,566)	(530,604)
Վճարված շահութահարկ	(86,618)	(2,709)
Գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(1,686,184)	(533,313)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(74,983)	(7,799)
Ներդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(74,983)	(7,799)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված վարկեր և փոխառություններ	1,793,615	500,000
Վարկերի և փոխառությունների մարում	(239,177)	-
Մուտքեր կանոնադրական կապիտալի համալրումից	-	500,000
Ֆինանսավորման գործունեությամբ ստացված դրամական միջոցների հոսքեր	1,554,438	1,000,000
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում) աճ	(206,729)	458,888
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,921)	(2)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	458,886	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	247,236	458,886
9		

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Չբաշխված շահույթ հազ. դրամ	Ընդամենը սեփական կապիտալ հազ. դրամ
Մնացորդը առ 22 մարտի 2010թ. (հիմնադրման ամսաթիվ) (աուդիտ չանցած)	-	-	-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար (աուդիտ չանցած)	-	-	167,008	167,008
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ				
Թողարկված բաժնեմասեր (ծնթգ. 17) (աուդիտ չանցած)	180,000	-	-	180,000
Լրացուցիչ կապիտալի աճ՝ Բաժնետիրոջ կողմից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունքում՝ առանց 70,215 հազար դրամ հետաձգված հարկի (ծնթգ. 14) (աուդիտ չանցած)	-	280,858	-	280,858
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ (աուդիտ չանցած)	180,000	280,858	-	460,858
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ. (աուդիտ չանցած)	180,000	280,858	167,008	627,866
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. (աուդիտ չանցած)	180,000	280,858	167,008	627,866
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	682,298	682,298
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ				
Թողարկված բաժնեմասեր (ծնթգ. 17)	320,000	-	-	320,000
Լրացուցիչ կապիտալի աճ՝ Բաժնետիրոջ կողմից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունքում՝ առանց 298,531 հազար դրամ հետաձգված հարկի (ծնթգ. 14)	-	1,194,124	-	1,194,124
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	320,000	1,194,124	-	1,514,124
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	500,000	1,474,982	849,306	2,824,288

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ն (Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասպանատվությամբ ընկերություն 2010թ. մարտի 22-ին: Կազմակերպությունը վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) 2010թ. ապրիլի 27-ին: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրո և միջին վարկերի տրամադրումն է անհատներին և անհատ ձեռնարկատերերին սպառողական և բիզնես նպատակների համար Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ): Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունն ունի չորս մասնաճյուղ և ութ ներկայացուցչություն Հայաստանի Հանրապետությունում, որոնց միացրցով այն իրականացնում է իր գործունեությունը: Գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կալենցի փ. 11: Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Կազմակերպության սեփականատերն է հանդիսանում Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը (Բաժնետեր): Բաժնետիրոջ գործունեությունը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը բաղկացած է հինգ անդամից, որոնք, Բաժնետիրոջ կանոնադրության համաձայն, ընտրվում են նախապես սահմանված տարբեր ժամանակահատվածներով՝ Հոգաբարձուների խորհրդի այլ անդամների կողմից: Իր ֆինանսավորման մեծ մասը Կազմակերպությունը ստանում է Բաժնետիրոջից: Արդյունքում, Կազմակերպությունը տնտեսական կախման մեջ է գտնվում Բաժնետիրոջից: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև սկտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 11-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր» վարկերի արժեզրկման գնահատման հետ կապված և ծանոթագրություն 14-ում՝ «Վարկեր և փոխառություններ» Բաժնետիրոջից ստացված անտոկոս փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Կազմակերպության համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Կազմակերպությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, օգտագործման սահմանափակում չունեցող ընթացիկ հաշիվները և բանկերում տեղաբաշխված կարճաժամկետ ավանդները: Կարճաժամկետ ավանդներն իրենցից ներկայացնում են մինչև երեք ամիս նախնական մարման ժամկետով ավանդներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ
- սկզբնական ճանաչման պահին Կազմակերպության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Կազմակերպությունը կարող է նախատեսել; ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում և գնահատվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանալիս այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Կազմակերպությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Կազմակերպությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ

- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքը կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող/տրամադրվող ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ

Շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող/տրամադրվող ֆինանսական ակտիվները կամ պարտավորությունները վերաչափվում են ստացման/տրամադրման պահին իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է տոկոսագումարների ապագա վճարումները և մայր գումարի մարումը(ները)՝ զեղչված նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքով: Առաջացող տարբերությունն արտացոլվում է շահույթում կամ վնասում՝ որպես շահույթ կամ վնաս շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող/տրամադրվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների գծով: Հետագայում այս ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ստացման/տրամադրման պահին շահույթի/վնասի ամորտիզացիայի չափով, և համապատասխան եկամուտը/ծախսերն արտացոլվում են տոկոսային եկամտում/ծախսում շահույթի կամ վնասի կազմում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բաժնետիրոջից շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացված ֆինանսական պարտավորությունները վերաչափվում են ստացման պահին իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է տոկոսագումարների ապագա վճարումները և մայր գումարի մարումը(ները)՝ զեղչված նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքով: Առաջացող տարբերությունն արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես լրացուցիչ կապիտալ շուկայականից տարբեր տոկոսադրույքներով ստացվող ֆինանսական պարտավորությունների գծով:

(vi) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեք է համարվում այն գումարը, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը՝ մարվել իրազեկ, պատրաստական կողմերի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքում» չափման ամսաթվի դրությամբ:

Հնարավորության դեպքում Կազմակերպությունը գործիքի իրական արժեքը չափում է ելնելով գործող շուկայում այդ գործիքի համար գնանշված գներից: Շուկան համարվում է գործող, եթե գնանշված գները հեշտորեն ու կանոնավոր կերպով հասանելի են և իրենցից ներկայացնում են փաստացի և կանոնավոր կերպով շուկայում տեղի ունեցող «անկախ կողմերի միջև գործարքներ»:

Եթե ֆինանսական գործիքի շուկան գործող շուկա չէ, ապա Կազմակերպությունը որոշում է իրական արժեքը օգտագործելով գնահատման տեխնիկա: Գնահատման տեխնիկաները ներառում են շուկայում վերջերս կատարված իրազեկ, պատրաստական «անկախ կողմերի միջև գործարքների» օգտագործումը (դրանց առկայության դեպքում), մեկ այլ էականորեն չտարբերվող գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը և օպցիոնների գնահատման մոդելները: Ընտրված գնահատման մեթոդը որպես մուտքային տվյալներ առավելագույնս օգտագործում է շուկայական տվյալները և նվազագույնս հիմնվում է Կազմակերպությանը յուրահատուկ գնահատականների վրա, ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեն զինը որոշելիս, և համապատասխանում է ֆինանսական գործիքների գնահատման ընդունված տնտեսագիտական մեթոդաբանությաններին: Գնահատման տեխնիկայի մուտքային տվյալները խելամտորեն ներկայացնում են շուկայի սպասումները և ֆինանսական գործիքին ներհատուկ ռիսկ-հատույց գործոնների չափումները:

Ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման ժամանակ դրա իրական արժեքի լավագույն վկայությունը գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը, բացառությամբ եթե այդ գործիքի իրական արժեքի մասին վկայությունը ստացվում է նույն գործիքի գծով (այսինքն՝ առանց վերափոխման կամ «վերափաթեթավորման») այլ դիտարկելի ընթացիկ շուկայական գործարքների հետ համեմատության միջոցով, կամ գնահատման մի մոդելի հիման վրա, որի փոփոխականները ներառում են տվյալներ միայն դիտարկելի շուկաներից: Եթե գործարքի գինը տրամադրում է իրական արժեքի լավագույն վկայությունը սկզբնական ճանաչման ժամանակ, ապա ֆինանսական գործիքը սկզբնապես չափվում է գործարքի գնով, և այս գնի ու գնահատման մոդելի կիրառման արդյունքում սկզբնապես ձեռքբերված արժեքի տարբերությունը հետագայում ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ քան գնահատման ամբողջական հիմնավորումը դիտարկելի շուկայական տվյալներով կամ գործարքի ավարտը:

Ակտիվները և երկար դիրքերը չափվում են առքի գնով, պարտավորությունները և կարճ դիրքերը չափվում են վաճառքի գնով: Երբ Կազմակերպությունն ունի միմյանց չեզոքացնող ռիսկերով դիրքեր, այն միջին շուկայական գներն օգտագործում է որպես հիմք՝ չեզոքացնող ռիսկային դիրքերը չափելու համար, և առքի կամ վաճառքի գնի գծով ճշգրտումը համապատասխանաբար կիրառում է միայն գուտ բաց դիրքի նկատմամբ: Իրական արժեքն արտացոլում է գործիքի վարկային ռիսկը և ներառում են ճշգրտումներ Կազմակերպության և գործարքի կողմի վարկային ռիսկը հաշվի առնելու համար՝ անհրաժեշտության դեպքում: Մոդելների օգտագործման արդյունքում ստացված իրական արժեքի գնահատականները ճշգրտվում են ցանկացած այլ գործոնների հետ կապված՝ այդ թվում իրացվելիության ռիսկի կամ մոդելի անորոշության հետ կապված, այնքանով, որքանով Կազմակերպությունը գտնում է, որ երրորդ անձ հանդիսացող շուկայի մասնակիցը կարող է դրանք հաշվի առնել գործարքի գինը որոշելիս:

(vii) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ եկամուտ (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(viii) Ապաճանաչում

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվն այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Կազմակերպությունը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, իսկ պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամանակից շուտ մարման հետևանքով առաջացած շահույթի կամ վնասի կազմում:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(ix) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(i) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- | | |
|---------------------------------------|-------------|
| – Համակարգիչներ և կապի սարքավորումներ | 1-ից 5 տարի |
| – Փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – Այլ | 5 տարի |

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(զ) Արժեզրկում

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը փոխառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները փոխառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, փոխառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող փոխառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող փոխառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են՝ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ փոխառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթում կատարած ներդրման իրական արժեքի էական կամ երկարատև նվազումը դրա սկզբնական արժեքից հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:

(ե) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերականգնվորման գծով պահուստը ճանաչվում է, երբ Կազմակերպությունը հաստատում է վերականգնվորման մանրամասն պաշտոնական պլանը և երբ սկսվում է վերականգնվորումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

(ը) Կանոնադրական կապիտալ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Կազմակերպության բաժնեմասերը ենթական են մարման բաժնետիրոջ հայեցողությամբ: Կազմակերպությունը պարտավոր է մարել բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետիրոջ բաժնեմասը՝ այդ բաժնետիրոջ կողմից վճարված նախնական գումարի չափով: Լուծարման դեպքում Կազմակերպությունը պարտավոր է բաժնետերերին տրամադրել իր զուտ ակտիվների համամասնական բաժինը:

Բաժնետերերին վերագրվող զուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Կազմակերպության վերադարձնելի ֆինանսական գործիքները բավարարում են սեփական կապիտալի ներկայացմանը վերաբերող ՀՀՍՍ 32-ի բոլոր պահանջներին:

(ի) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Բաժնեմասերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(թ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում շահութային կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից առաջացած ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ազդեցություն չունեն հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

(ժ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահութային կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտն ու ծախսը ճանաչվում են շահութային կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են շահութային կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ի) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Կազմակերպության ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Կազմակերպությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը կգործի 2015թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրառարակվի մի քանի փուլերով, և ենթադրվում է, որ կփոխարինի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»: ՖՀՄՍ 9-ի առաջին մասը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2009թ. նոյեմբերին: Երկրորդ մասը, որը վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2010թ. հոկտեմբերին: Ակնկալվում է, որ ստանդարտի մնացած մասերը կիրառարակվեն 2012թ. ընթացքում: Կազմակերպությունն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ էական ազդեցություն կունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց: Կազմակերպությունը մտադիր չէ կիրառել այս ստանդարտը ժամանակից շուտ:
- ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում» ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը փոխարինում է առանձին ՖՀՄՍ-ներում ընդգրկված իրական արժեքի չափման ուղեցույցները և իրենից ներկայացնում է իրական արժեքի չափման մեկ ընդհանուր ուղեցույց: Այն տրամադրում է իրական արժեքի վերանայված սահմանումը, սահմանում է իրական արժեքի չափման հիմունքները և ներկայացնում է իրական արժեքի չափման համար պահանջվող բացահայտումները: ՖՀՄՍ 13 չի ներկայացնում նոր պահանջներ ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի չափման համար և չի բացառում գործնականում կիրառվող իրական արժեքի չափմանը վերաբերող բացառությունները, որոնք ներկայումս գոյություն ունեն որոշ ստանդարտներում: Ստանդարտը կիրառվում է հեռանկարային հիմունքով, և թույլատրվում է դրա ժամկետից շուտ կիրառումը: Համադրելի տեղեկատվության բացահայտում չի պահանջվում սկզբնական կիրառմանը նախորդող ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունը դեռևս չի վերլուծել այս նոր ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:
- ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում. Այլ համապարփակ եկամտի միավորների ներկայացում» ստանդարտի փոփոխություն: Փոփոխությունը պահանջում է, որպեսզի կազմակերպությունն այլ համապարփակ եկամտի այն միավորները, որոնք ապագայում կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի, ներկայացնի շահույթ կամ վնաս չվերադասակարգվող միավորներից առանձին: Ի լրումն, այս փոփոխության համաձայն «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը» սկսվում է կոչվել «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն»: Այնուամենայնիվ, թույլատրվում է այլ անվանումների օգտագործում: Փոփոխությունը պետք է կիրառվի հետադարձ հիմունքով 2012 հուլիսի 1-ից, և թույլատրվում է դրա ժամանակից շուտ կիրառումը:

- ՖՀՄՄ 7 «Բացահայտումներ – Ֆինանսական ակտիվների փոխանցումներ» ստանդարտի փոփոխությունը ներկայացնում է լրացուցիչ պահանջներ ֆինանսական ակտիվների փոխանցումների բացահայտումների համար, այն դեպքերում, երբ ակտիվի ճանաչումն ամբողջովին չի դադարեցվում, կամ երբ ակտիվի ճանաչումն ամբողջովին դադարեցվում է, սակայն պահպանվում է շարունակական ներգրավվածությունը փոխանցված ակտիվներում: Նախատեսվում է, որ բացահայտման նոր պահանջները թույլ կտան ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին ավելի լավ պատկերացում կազմել այդ ակտիվների հետ կապված ռիսկերի և հատուցումների բնույթի մասին: Փոփոխությունը գործում է 2011թ. հուլիսի 1-ից կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Կազմակերպությունը չի գտնում, որ այս փոփոխությունն էական ազդեցություն կունենա իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:
- Բազմաթիվ «ՖՀՄՄ-ների կատարելագործումները» դիտարկվել են առանձին՝ յուրաքանչյուր ստանդարտի հիմունքով: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, ուժի մեջ կմտնեն 2012թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Կազմակերպությունը չի գտնում, որ այս կատարելագործումներն էական ազդեցություն կունենան իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

4 Չուտ տոկոսային եկամուտ

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
Սուդիտ չանցած		
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	1,416,861	76,820
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	57,913	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,827	1,768
	1,478,601	78,588
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	174,992	903

5 Այլ գործառնական եկամուտ

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
Սուդիտ չանցած		
Եկամուտ Բաժնետիրոջից՝ մատուցված ծառայությունների գծով (ծնթգ. 15)	171,763	284,031
Այլ	9,211	83
	180,974	284,114

6 Աշխատակազմի գծով ծախսեր

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Աշխատակիցների հատուցումներ	396,069	90,267
Աշխատավարձին վերաբերող հարկեր	42,328	9,680
	438,397	99,947

7 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Գործառնական վարձակալության գծով ծախս	46,323	8,030
Վերանորոգման և սպասարկման ծախսեր	17,542	4,241
Գրասենյակային ծախսեր	16,221	4,554
Անվտանգության ծառայություն	13,806	2,613
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	12,246	3,655
Մաշվածություն և ամորտիզացիա	10,179	47
Կապի և տեղեկատվական ծառայություններ	7,697	1,494
Մասնագիտական ծառայություններ	6,800	-
Գործուղման ծախսեր	4,578	2,079
Գովազդ և շուկայավարում	3,340	476
Ապահովագրություն	226	-
Այլ	10,855	4,532
	149,813	31,721

8 Շահութահարկի գծով ծախս

	2011թ. հազ. դրամ	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	163,769	50,945
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	7,314	(9,090)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	171,083	41,855

2011թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2010թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2011թ. հազ. դրամ	%	2010թ. մարտի 22-ից (հիմնադրման ամսաթիվ) 2010թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջան հազ. դրամ	%
			Աուդիտ չանցած	
Շահույթ մինչև հարկումը	853,381		208,863	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	170,676	20.00%	41,773	20.00%
Չնվազեցվող ծախսեր	407	0.05%	82	0.04%
	171,083	20.05%	41,855	20.04%

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են գուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Համաձայն գործող օրենսդրության այս նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը սահմանափակ չէ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2011թ. և 2010թ. ընթացքում:

2011թ. հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	(823)	(1,845)	-	(2,668)
Հաճախորդներին տրված վարկեր	9,732	(33,964)	-	(24,232)
Վարկեր և փոխառություններ	(70,034)	22,736	(298,531)	(345,829)
Այլ պարտավորություններ	-	5,759	-	5,759
	(61,125)	(7,314)	(298,531)	(366,970)

2010թ.
(Աուդիտ չանցած)

հազ. դրամ	Մնացորդը առ 22 մարտի 2010թ. (հիմնադրման ամսաթիվ)	Շահույթում կամ վնասում ճանաչված	Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	-	(823)	-	(823)
Հաճախորդներին տրված վարկեր	-	9,732	-	9,732
Վարկեր և փոխառություններ	-	181	(70,215)	(70,034)
	-	9,090	(70,215)	(61,125)

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Կանխիկը դրամարկղում	6,187	48,558
Ընթացիկ հաշիվներ 10 խոշորագույն հայկական բանկերում	241,049	410,328
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում	247,236	458,886

Դրամական միջոցները և դրանց համարժեքները արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի պայմանագրային կողմ հանդիսացող ոչ մի բանկ (2010թ-ին՝ մեկ բանկ), որի մնացորդները գերազանցում են Կազմակերպության սեփական կապիտալի 10%-ը: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր 410,328 հազար դրամ:

10 Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
10 խոշորագույն հայկական բանկեր	1,076,778	-
Ընդամենը բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	1,076,778	-

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ժամկետային ավանդները տեղաբաշխված են միայն մեկ բանկում:

11 Հաճախորդներին տրված վարկեր

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Քիզնես վարկեր		
Վարկեր անհատ ձեռնարկատերերին	237,439	101,417
Անհատներին տրված վարկեր		
Գյուղատնտեսական վարկեր	3,112,613	1,820,969
Բնակարանային պայմանների բարելավման վարկեր	1,336,223	477,273
Ընդամենը անհատներին տրված վարկեր	4,448,836	2,298,242
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	4,686,275	2,399,659
Արժեզրկման գծով պահուստ	(53,916)	(18,260)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	4,632,359	2,381,399

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2011թ. ընթացքում:

	Քիզնես վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	868	17,392	18,260
Զուտ ծախս	2,237	33,419	35,656
Մնացորդը տարեվերջին	3,105	50,811	53,916

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2010թ. ընթացքում (աուդիտ չանցած):

	Քիզնես վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը առ 22 մարտի 2010թ. (հիմնադրման ամսաթիվ)	-	-	-
Զուտ ծախս	868	17,392	18,260
Մնացորդը տարեվերջին	868	17,392	18,260

(ա) Հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Քիզմես վարկեր				
Վարկեր անհատ ձեռնարկատերերին				
- ոչ ժամկետանց	235,066	2,012	233,054	0.86%
- մինչև 30 օր ժամկետանց	924	161	763	17.42%
- 30-89 օր ժամկետանց	139	89	50	64.03%
- 90-179 օր ժամկետանց	1,310	843	467	64.35%
Ընդամենը քիզմես վարկեր	237,439	3,105	234,334	1.31%
Անհատներին տրված վարկեր				
Գյուղատնտեսական վարկեր				
- ոչ ժամկետանց	3,094,657	23,419	3,071,238	0.76%
- մինչև 30 օր ժամկետանց	2,034	407	1,627	20.01%
- 30-89 օր ժամկետանց	7,700	4,842	2,858	62.88%
- 90-179 օր ժամկետանց	8,222	6,460	1,762	78.57%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	3,112,613	35,128	3,077,485	1.13%
Բնակարանային պայմանների բարելավման վարկեր				
- ոչ ժամկետանց	1,329,196	10,059	1,319,137	0.76%
- մինչև 30 օր ժամկետանց	586	117	469	19.97%
- 30-89 օր ժամկետանց	809	509	300	62.92%
- 90-179 օր ժամկետանց	2,528	1,986	542	78.56%
- ավելի քան 180 օր ժամկետանց	3,104	3,012	92	97.04%
Ընդամենը բնակարանային պայմանների բարելավման վարկեր	1,336,223	15,683	1,320,540	1.17%
Ընդամենը անհատներին տրված վարկեր	4,448,836	50,811	4,398,025	1.14%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	4,686,275	53,916	4,632,359	1.15%

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած):

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Չուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Բիզնես վարկեր				
Վարկեր անհատ ձեռնարկատերերին				
- ոչ ժամկետանց	101,417	868	100,549	0.86%
Ընդամենը բիզնես վարկեր	101,417	868	100,549	0.86%
Անհատներին տրված վարկեր				
Գյուղատնտեսական վարկեր				
- ոչ ժամկետանց	1,820,969	13,780	1,807,189	0.76%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	1,820,969	13,780	1,807,189	0.76%
Բնակարանային պայմանների բարելավման վարկեր				
- ոչ ժամկետանց	477,273	3,612	473,661	0.76%
Ընդամենը բնակարանային պայմանների բարելավման վարկեր	477,273	3,612	473,661	0.76%
Ընդամենը անհատներին տրված վարկեր	2,298,242	17,392	2,280,850	0.76%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	2,399,659	18,260	2,381,399	0.76%

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառված հիմնական ենթադրություններ և դատողություններ

(i) Բիզնես վարկեր

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի անհատական հիմունքով էական հանդիսացող վարկեր, այդ իսկ պատճառով, ղեկավարությունն բիզնես վարկերի արժեզրկումը որոշում է արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման հիման վրա: Հաշվի առնելով իր գործունեության կարճատևությունը՝ Կազմակերպությունն օգտագործում է նմանատիպ կազմակերպությունների վնաս կրելու նախկին փորձը համանման վարկերի համար:

Բիզնես վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությունով, որ Կազմակերպության բիզնես վարկերի գծով արժեզրկումից կորուստները մոտավորապես հավասար կլինեն Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ գործիքների գծով վարկային կազմակերպությունների և բանկերի կողմից կրած արժեզրկումից միջին կորուստներին:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գուտ ներկա արժեքը փոփոխվեր մեկ տոկոսով, ապա բիզնես վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր/կավելանար 2,343 հազար դրամով (2010թ-ին՝ կնվազեր/կավելանար 1,005 հազար դրամով):

(ii) Անհատներին տրված վարկեր

Հաշվի առնելով գործունեության կարճատևությունը՝ Կազմակերպությունն օգտագործում է նմանատիպ կազմակերպությունների վնաս կրելու նախկին փորձը՝ անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելու համար:

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է այն հիմնական ենթադրությունով, որ Կազմակերպության անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները մոտավորապես հավասար կլինեն Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ գործիքների գծով վարկային կազմակերպությունների և բանկերի կողմից կրած արժեզրկումից միջին կորուստներին:

Այս գնահատումների փոփոխություններն ազդեցություն կունենան վարկի արժեզրկման գծով պահուստի վրա: Եթե դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գուտ ներկա արժեքը փոփոխվեր մեկ տոկոսով, ապա անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազեր/կավելանար 43,980 հազար դրամով (2010թ-ին՝ կնվազեր/կավելանար 22,809 հազար դրամով):

(գ) Գրավի վերլուծություն

(i) Բիզնես վարկեր

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա բոլոր բիզնես վարկերի համար ապահովություն են ծառայում անձնական երաշխիքները: Այս վարկերն այլ միջոցներով ապահովված չեն:

(ii) Անհատներին տրված վարկեր

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա անհատներին տրված բոլոր վարկերի համար ապահովություն են ծառայում Կազմակերպությունից վարկեր ստանալու նպատակով ձևավորված փոխառուների խմբի անդամների կողմից տրված անձնական երաշխիքները: Այս վարկերն այլ միջոցներով ապահովված չեն:

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Առդիտ չանցած
Գյուղատնտեսություն	3,112,613	1,820,969
Սպառողական վարկեր	1,336,223	477,273
Առևտուր	191,987	91,740
Այլ	45,452	9,677
	4,686,275	2,399,659
Արժեզրկման գծով պահուստ	(53,916)	(18,260)
	4,632,359	2,381,399

(ե) Վարկային ռիսկին ենթարկվածություն

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի փոխառուներ կամ կապակցված փոխառուների խմբեր (2010թ-ին՝ բացակայում էին), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

(զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 18-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

12 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. (աուդիտ չանցած)	2,175	-	347	5,277	7,799
Ավելացումներ	20,713	28,689	24,331	1,250	74,983
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	22,888	28,689	24,678	6,527	82,782
Մաշվածություն և ամորտիզացիա					
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ. (աուդիտ չանցած)	2	-	-	45	47
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	5,398	-	3,383	1,398	10,179
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	5,400	-	3,383	1,443	10,226
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2011թ.	17,488	28,689	21,295	5,084	72,556
հազ. դրամ	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 22 մարտի 2010թ. (հիմնադրման ամսաթիվ) (աուդիտ չանցած)	-	-	-	-	-
Ավելացումներ (աուդիտ չանցած)	2,175	-	347	5,277	7,799
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ. (աուդիտ չանցած)	2,175	-	347	5,277	7,799
Մաշվածություն և ամորտիզացիա					
Մնացորդը առ 22 մարտի 2010թ. (հիմնադրման ամսաթիվ) (աուդիտ չանցած)	-	-	-	-	-
Ժամանակաշրջանի մաշվածություն և ամորտիզացիա (աուդիտ չանցած)	2	-	-	45	47
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ. (աուդիտ չանցած)	2	-	-	45	47
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2010թ. (աուդիտ չանցած)	2,173	-	347	5,232	7,752

2011թ. ընթացքում չեն եղել փոխառության կապիտալացված ծախսումներ, որոնք վերաբերում են հիմնական միջոցների ձեռքբերմանը (2010թ-ին՝ նման ծախսումներ չեն եղել):

13 Այլ ակտիվներ

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Կանխավճարներ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	25,752	62
Այլ կանխավճարներ	6,121	988
Նյութեր և պաշարներ	1,090	1,151
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	32,963	2,201

14 Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Կազմակերպության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների վերաբերյալ: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված վարկեր այլ հիմնադրամներից	1,319,541	-
Գրավով չապահովված վարկեր Բաժնետիրոջից	909,209	149,831
	2,228,750	149,831
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով չապահովված վարկեր այլ հիմնադրամներից	176,303	-
	176,303	-
	2,405,053	149,831

Բաժնետերը վարկերը տրամադրել է 2010թ. և 2011թ.՝ գրոյական տոկոսադրույքով: Վարկերը ճանաչվել են իրական արժեքով՝ կիրառելով նմանատիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքները: Վարկերի սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվել է որպես լրացուցիչ կապիտալ՝ առանց հետաձգված հարկի:

Պարտքերի մարման պայմանները և ժամանակացույցը

Ստորև ներկայացված են գործող վարկերի պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ. տոկոսադր.	Մարման տարի	31 դեկտեմբերի 2011թ.		31 դեկտեմբերի 2010թ. Առդիս չանցած	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով չապահովված վարկեր Բաժնետիրոջից	ՀՀ դրամ	0.00%	2020	2,638,351	909,209	500,000	149,831
Գրավով չապահովված վարկեր այլ հիմնադրամներից	Եվրո	7.78%	2017	240,049	240,049	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ հիմնադրամներից	ԱՄՆ դոլար	7.78%	2014	469,925	469,925	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ հիմնադրամներից	ԱՄՆ դոլար	8.06%	2014	785,870	785,870	-	-
				4,134,195	2,405,053	500,000	149,831

Վարկերի և փոխառությունների կենտրոնացում

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ունի երեք պայմանագրային կողմ (2010թ-ին՝ մեկ պայմանագրային կողմ), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 2,165,004 հազար դրամ (2010թ-ին՝ 149,831 հազար դրամ):

15 Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բաժնետիրոջը վճարվելիք 262,520 հազար դրամ գումարը (2010թ-ին՝ 1,609,492 հազար դրամ) առաջացել է Կազմակերպության և Բաժնետիրոջ միջև կնքված պայմանագրի շրջանակներում: Համաձայն պայմանագրի Կազմակերպությունն իրականացնում է Բաժնետիրոջ կողմից տրամադրված վարկերի մայր գումարի և տոկոսագումարների մարումների հավաքագրում և մոնիտորինգ, որի համար Բաժնետերը վճարում է 15% վճար՝ մարված գումարի համար: 2011թ. հունվարին Բաժնետիրոջը վճարվելիք 1,609,492 հազար դրամ գումարը, որը պետք է վճարվեր 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, փոխարկվեց անտոկոս վարկի՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 1-ը մարման ժամկետով:

16 Այլ պարտավորություններ

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Հաշվեգրված ծախսեր	28,794	-
Աշխատավարձ և աշխատակիցներին վճարվելիք այլ գումարներ	16,144	6,576
Այլ	5,772	7,207
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	50,710	13,783
Այլ վճարվելիք հարկեր	14,083	15,431
Հետաձգված եկամուտ	12,882	4,475
Բաժնետիրոջ կողմից վճարված կանխավճարներ՝ կանոնադրական կապիտալի համալրման համար	-	320,000
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	26,965	339,906
	77,675	353,689

2010թ. դեկտեմբերի 1-ին Բաժնետիրոջ Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց Կազմակերպության փոփոխված կանոնադրությունը, համաձայն որի Կազմակերպության կանոնադրական կապիտալի անվանական արժեքը 180,000 հազար դրամից աճեց 500,000 հազար դրամի: Փոփոխված կանոնադրությունը հաստատվեց ՀՀ ԿԲ-ի կողմից 2011թ. հունվարի 25-ին:

17 Սեփական կապիտալ

(ա) Կանոնադրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և համալրված կանոնադրական կապիտալը բաղկացած է 5,000 (2010թ-ին՝ 1,800) բաժնեմասից: Բոլոր բաժնեմասերի անվանական արժեքը կազմում է 100 հազար դրամ: 2011թ. ընթացքում թողարկվել է 3,200 բաժնեմաս (2010թ-ին՝ 1,800) անվանական արժեքով, ինչը հանգեցրել է կանոնադրական կապիտալի աճին 320,000 հազար դրամով (2010թ-ին՝ 180,000 հազար դրամով):

Բաժնեմասերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Կազմակերպության մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնեմաս - մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության առավելագույն չբաշխված շահույթի չափով: ՀՀ օրենսդրության համաձայն հաշվետու ամսաթվի դրությամբ բաշխման ենթակա պահուստները կազմում են 832,320 հազար դրամ (2010թ-ին՝ 163,668 հազար դրամ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ և 2011թ. դեկտեմբերի 31-ից հետո շահաբաժիններ չեն հայտարարվել:

18 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկավորման ոլորտի համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց Կազմակերպությունը ենթարկվում է իր գործունեությունն իրականացնելիս:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Բաժնետերը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործառնությունների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Կազմակերպության գործունեությունն ապահովելու համար: Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար, այն նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, գնահատման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ղեկավարությունն ուղղակիորեն հաշվետու է Բաժնետիրոջը:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության որոշմանը:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունն ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների տարբերությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2011թ.						
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	241,049	-	-	-	-	241,049
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	473,568	603,210	-	-	-	1,076,778
Հաճախորդներին տրված վարկեր	754,894	766,693	2,388,758	722,014	-	4,632,359
	1,469,511	1,369,903	2,388,758	722,014	-	5,950,186
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Վարկեր և փոխառություններ	14,330	7,665	154,308	1,080,156	1,148,594	2,405,053
Տարբերություն	1,455,181	1,362,238	2,234,450	(358,142)	(1,148,594)	3,545,133
31 դեկտեմբերի 2010թ. (առողիտ չանցած)						
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	410,328	-	-	-	-	410,328
Հաճախորդներին տրված վարկեր	373,502	345,935	1,570,085	91,877	-	2,381,399
	783,830	345,935	1,570,085	91,877	-	2,791,727
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	149,831	149,831
Տարբերություն	783,830	345,935	1,570,085	91,877	(149,831)	2,641,896

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2011թ.			2010թ.
	Միջին արդյունավետ տոկոսադրույք			Միջին արդյունավետ տոկոսադրույք
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Աուդիտ չանցած ՀՀ դրամ
Տոկոսակիր ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
- Ընթացիկ հաշիվներ	1.00%	1.00%	1.00%	1.00%
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	-	7.69%	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	39.00%	-	-	53.05%
Տոկոսակիր պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ				
- Գրավով չապահովված վարկեր այլ հիմնադրամներից	-	7.95%	7.78%	-
- Գրավով չապահովված վարկեր Բաժնետիրոջից	15.00%	-	-	15.00%

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է շուկայական տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 տոկոսային կետով (տկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2011թ.	2010թ.
	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Շահույթ կամ վնաս հազ. դրամ
		Աուդիտ չանցած
100 տկ զուգահեռ նվազում	(21,929)	(10,665)
100 տկ զուգահեռ աճ	21,929	10,665

(ii) Արտարժույթի ռիսկ

Կազմակերպությունն ունի ԱՄՆ դոլարով և Եվրոյով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	64,541	141,881	40,814	247,236
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	-	1,076,778	-	1,076,778
Հաճախորդներին տրված վարկեր	4,632,359	-	-	4,632,359
Ընդամենը ակտիվներ	4,696,900	1,218,659	40,814	5,956,373
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Վարկեր և փոխառություններ	909,209	1,255,795	240,049	2,405,053
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	262,520	-	-	262,520
Այլ ֆինանսական պարտավորություններ	50,710	-	-	50,710
Ընդամենը պարտավորություններ	1,222,439	1,255,795	240,049	2,718,283
Ջուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2011թ.	3,474,461	(37,136)	(199,235)	3,238,090

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած):

	ՀՀ դրամ	Եվրո	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	458,791	95	458,886
Հաճախորդներին տրված վարկեր	2,381,399	-	2,381,399
Ընդամենը ակտիվներ	2,840,190	95	2,840,285
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	149,831	-	149,831
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	1,609,492	-	1,609,492
Այլ ֆինանսական պարտավորություններ	13,783	-	13,783
Ընդամենը պարտավորություններ	1,773,106	-	1,773,106
Ջուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2010թ.	1,067,084	95	1,067,179

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Կազմակերպությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանկաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	<u>2011թ.</u>	<u>2010թ.</u>
	<u>Շահույթ կամ վնաս հազ. դրամ</u>	<u>Շահույթ կամ վնաս հազ. դրամ</u>
		Աուդիտ չանցած
ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ	3,714	-
ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժևորում եվրոյի նկատմամբ	19,924	(9)

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահայտված վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ վարկառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր ճանաչված ֆինանսական ակտիվների հետ կապված վարկային ռիսկը կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները: Վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Բաժնետիրոջ կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Վարկային ռիսկն ամենակարևոր ռիսկն է Կազմակերպության գործունեության համար, այդ իսկ պատճառով, դեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում այդ ռիսկի կառավարմանը: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկավորման գործունեության հետ կապված՝ հանգեցնելով վարկերի ու փոխատվությունների տրամադրմանը: Վարկային ռիսկը կառավարվում և վերահսկվում է վարկային բաժնի մենեջերների և Մոնիտորինգի բաժնի կողմից, իսկ վարկային ռիսկի վերաբերյալ հաշվետվությունները կանոնավոր կերպով ներկայացվում են դեկավարությանը:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն աստիճանը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
	Աուդիտ չանցած	
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		
- Ընթացիկ հաշիվներ	241,049	410,328
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	1,076,778	-
Հաճախորդներին տրված վարկեր	4,632,359	2,381,399
Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը	5,950,186	2,791,727

Որպես կանոն գրավ չի պահանջվում բանկերում տեղաբաշխված միջոցների և հաճախորդներին տրված վարկերի դիմաց:

Հաճախորդներին տրված վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 11-ում:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը ունի մեկ պարտապան (2010թ-ին՝ մեկ պարտապան), որի հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է ընդհանուր վարկային ռիսկի 10%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված պարտապանի հետ կապված վարկային ռիսկը կազմում է 1,310,000 հազար դրամ (2010թ-ին՝ 410,328 հազար դրամ):

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ու տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները կատարելու համար:

Կազմակերպությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բաժնետիրոջից և այլ վարկավորող կազմակերպություններից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու նպատակով:

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված է դրամական միջոցների չգեղջված հոսքերի տեղաբաշխումը ֆինանսական պարտավորությունների ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակում ներկայացված արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է դրամական միջոցների պայմանագրային չգեղջված հոսքերը ֆինանսական պարտավորությունների գծով: Այս ֆինանսական պարտավորությունների գծով ակնկալվող դրամական միջոցների հոսքերը կարող են էականորեն տարբերվել այս վերլուծության տվյալներից:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսք ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	15,884	-	43,656	213,542	4,173,025	4,446,107	2,405,053
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	262,520	-	-	-	-	262,520	262,520
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	21,916	28,794	-	-	50,710	50,710
Ընդամենը պարտավորություններ	278,404	21,916	72,450	213,542	4,173,025	4,759,337	2,718,283

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած):

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսք ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	500,000	500,000	149,831
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	1,609,492	-	-	-	-	1,609,492	1,609,492
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	13,783	-	-	-	13,783	13,783
Ընդամենը պարտավորություններ	1,609,492	13,783	-	-	500,000	2,123,275	1,773,106

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ոչ ածանցյալ ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Բանկերում	247,236	-	-	-	-	-	-	247,236
տեղաբաշխված ժամկետային ավանդներ	-	473,568	603,210	-	-	-	-	1,076,778
Հաճախորդներին տրված վարկեր	232,536	498,866	3,155,451	722,014	-	-	23,492	4,632,359
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	72,556	-	72,556
Այլ ակտիվներ	6,121	25,752	-	-	-	1,090	-	32,963
Ընդամենը ակտիվներ	485,893	998,186	3,758,661	722,014	-	73,646	23,492	6,061,892
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	14,330	-	161,973	1,080,156	1,148,594	-	-	2,405,053
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	-	125,386	-	-	-	-	125,386
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	366,970	-	366,970
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	262,520	-	-	-	-	-	-	262,520
Այլ պարտավորություններ	14,083	34,798	28,794	-	-	-	-	77,675
Ընդամենը պարտավորություններ	290,933	34,798	316,153	1,080,156	1,148,594	366,970	-	3,237,604
Ջուտ դիրք	194,960	963,388	3,442,508	(358,142)	(1,148,594)	(293,324)	23,492	2,824,288

«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների (ատոլիտ չանցած):

հազ. դրամ	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ոչ ածանցյալ ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	458,886	-	-	-	-	-	-	458,886
Հաճախորդներին տրված վարկեր	112,944	260,558	1,916,020	91,877	-	-	-	2,381,399
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	7,752	-	7,752
Այլ ակտիվներ	1,050	-	-	-	-	1,151	-	2,201
Ընդամենը ակտիվներ	572,880	260,558	1,916,020	91,877	-	8,903	-	2,850,238
Ոչ ածանցյալ պարտավորություններ								
Վարկեր և փոխառություններ	-	-	-	-	149,831	-	-	149,831
Ընթացիկ հարկային պարտավորություն	-	-	48,235	-	-	-	-	48,235
Հետաձգված հարկային պարտավորություն	-	-	-	-	-	61,125	-	61,125
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	1,609,492	-	-	-	-	-	-	1,609,492
Այլ պարտավորություններ	335,431	18,258	-	-	-	-	-	353,689
Ընդամենը պարտավորություններ	1,944,923	18,258	48,235	-	149,831	61,125	-	2,222,372
Ջուտ դիրք	(1,372,043)	242,300	1,867,785	91,877	(149,831)	(52,222)	-	627,866

19 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն նվազագույն բաժնետիրական կապիտալ և ընդհանուր կապիտալ 150,000 հազար դրամի չափով: 2011թ. և 2010թ. ընթացքում Կազմակերպության կապիտալի չափը համապատասխանում էր սահմանված չափին:

Կազմակերպության պարտքի և կապիտալի հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն էր.

	2011թ. հազ. դրամ	2010թ. հազ. դրամ
		Աուդիտ չանցած
Ընդամենը պարտավորություններ	3,237,604	2,222,372
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	247,236	458,886
Զուտ պարտքը	2,990,368	1,763,486
Ընդամենը սեփական կապիտալ	2,824,288	627,866
Պարտքի և կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1.06	2.81

Ընդհանուր պարտավորություններից 1,172,859 հազար դրամ գումարով պարտավարությունները (2010թ-ին՝ 2,082,949 հազար դրամ) վերաբերում են Բաժնետիրոջը: Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը չի փոփոխել:

20 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունն ամբողջությամբ ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեությունը վերաբերող պատահարներից: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Կազմակերպության ղեկավարությունը տեղյակ չէ Կազմակերպության դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

(գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Գեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Կազմակերպության ֆինանսական վիճակի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կազմակերպության մայր կազմակերպությունն է Սիկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը (Բաժնետեր): Կազմակերպության վերջնական վերահսկող կողմն է հանդիսանում Սիկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդը, որը բաղկացած է հինգ անդամից, որոնք ընտրվում են նախապես սահմանված տարբեր ժամանակահատվածներով՝ Հոգաբարձուների խորհրդի այլ անդամների կողմից:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	<u>2011թ. հազ. դրամ</u>	<u>2010թ. հազ. դրամ</u>
		Աուդիտ չանցած
Աշխատակիցների հատուցումներ	51,046	9,468
Աշխատավարձին վերաբերող հարկեր	3,056	599
	54,102	10,067

(բ) Գործարքներ Բաժնետիրոջ հետ

Ստորև ներկայացված են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բաժնետիրոջ հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2011թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ		
- ՀՀ դրամով*	909,209	15.00%
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	262,520	
Այլ պարտավորություններ	1,130	
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Եկամուտ Բաժնետիրոջից՝ մատուցված ծառայությունների գծով	171,763	
Տոկոսային ծախս	(113,682)	
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(12,050)	

Ստորև ներկայացված են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բաժնետիրոջ հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2010թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները (աուդիտ չանցած):

	հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ		
- ՀՀ դրամով*	149,831	15.00%
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	1,609,492	
Այլ պարտավորություններ	323,626	
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Եկամուտ Բաժնետիրոջից՝ մատուցված ծառայությունների գծով	284,031	
Տոկոսային ծախս	(903)	
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,148)	

* Բաժնետիրոջից ստացված վարկերն անտոկոս են և ենթակա են մարման սկսած 2018թ-ից: Սկզբնական ճանաչման պահին վարկերը գեղջվել են՝ կիրառելով 15% շուկայական տոկոսադրույքը: Բաժնետիրոջից ստացված վարկերի անվանական արժեքները ներկայացված են ծանոթագրություն 14-ում:

2011թ. ընթացքում Կազմակերպությունը Բաժնետիրոջից ձեռք է բերել 31,287 հազար դրամ (2010թ-ին՝ 7,799 հազար դրամ) գումարով հիմնական միջոցներ:

22 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Այլ անորոշագրված արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	247,236	-	247,236	247,236
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	1,076,778	-	1,076,778	1,076,778
Հաճախորդներին տրված վարկեր	4,632,359	-	4,632,359	4,632,359
	5,956,373	-	5,956,373	5,956,373
Վարկեր և փոխառություններ	-	2,405,053	2,405,053	2,405,053
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	-	262,520	262,520	262,520
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	50,710	50,710	50,710
	-	2,718,283	2,718,283	2,718,283

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (աուդիտ չանցած):

հազ. դրամ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Այլ անորոշագրված արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	458,886	-	458,886	458,886
Հաճախորդներին տրված վարկեր	2,381,399	-	2,381,399	2,381,399
	2,840,285	-	2,840,285	2,840,285
Վարկեր և փոխառություններ	-	149,831	149,831	149,831
Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ	-	1,609,492	1,609,492	1,609,492
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	13,783	13,783	13,783
	-	1,773,106	1,773,106	1,773,106

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են կիրառելով դրամական միջոցների գեղջված հոսքերի մեթոդը դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի նկատմամբ կիրառելի գեղջման դրույքը:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելիս ղեկավարությունն առաջնորդվել է հետևյալ ենթադրություններով.

- բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդների և հաճախորդներին տրված վարկերից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար կիրառվում են համապատասխանաբար 7.7% և 30% - 51% դրույքները,
- վարկերից և փոխառություններից ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելու համար կիրառվում են 7.8% - 15% դրույքները:

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի այնպիսի ֆինանսական գործիքներ, որոնց իրական արժեքը հաշվարկվում է ոչ շուկայական դիտարկելի ելքային տվյալներ կիրառող գնահատման մեթոդի միջոցով:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով վերը նշված ակտիվները կարող են փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ ակտիվների անմիջական վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

23 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

(ա) Կազմակերպության կազմակերպաիրավական ձևի փոփոխություն

2012թ. հունվարի 30-ին Կազմակերպության միակ բաժնետիրոջ՝ Սիկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց Կազմակերպության նոր կանոնադրությունը, համաձայն որի Կազմակերպության կազմակերպաիրավական ձևը փոխվեց փակ բաժնետիրական ընկերության: Նոր կանոնադրությունը հաստատվեց ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2012թ. փետրվարի 21-ին: Նոր կանոնադրության համաձայն Կազմակերպության Բաժնետերը լիազորում է 100,000 լրացուցիչ սովորական բաժնետոմսի թողարկում՝ 100 հազար դրամ անվանական արժեքով:

(բ) Բաժնետիրոջը վճարվելիք գումարներ

2012թ. մարտի 19-ին Կազմակերպությունը վարկային պայմանագիր ստորագրեց Բաժնետիրոջ հետ, համաձայն որի Բաժնետիրոջը վճարվելիք 230,000 հազար դրամ գումար (ծանոթագրություն 15) փոխարկվեց անտոկոս վարկի՝ մինչև 2020թ. դեկտեմբերի 30-ը մարման ժամկետով:

(բ) Կազմակերպության բաժնետիրական կապիտալի փոփոխություն

2012թ. մարտի 23-ին Կազմակերպությունը պայմանագիր ստորագրեց Բաժնետիրոջ հետ, համաձայն որի 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված 1,500,000 հազար դրամ գումարով գրավով չապահովված վարկերը փոխարկվեցին 15,000 սովորական բաժնետոմսի՝ 1,500,000 հազար դրամ ընդհանուր արժեքով: Կազմակերպությունը դիմել է ՀՀ կենտրոնական բանկին՝ բաժնետիրական կապիտալի փոփոխությունը հաստատելու համար: Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ այդ դիմումը գտնվում էր ՀՀ կենտրոնական բանկի կողմից ուսումնասիրման գործընթացում: